ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3145-Ա « 06 » օգոստոսի 2025 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 1-Ի Հ.2255-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 37-րդ հոդվածով, «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 52-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ և 53-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով լ/ա Արտաշես Մկրտչյանի 31.07.2025թ. հ.Դ-83052-25 դիմումը.

1.Երևան քաղաքի վարչական սահմաններում գտնվող անշարժ գույքերին տրամադրել հասցեներ՝ համաձայն հավելվածի:

2.Ուժը կորցրած ճանաչել Երևանի քաղաքապետի 2023 թվականի օգոստոսի 1-ի «Անշարժ գույքերին հասցեներ տրամադրելու մասին» հ.2255-Ա որոշման հավելվածի 9-րդ և 10-րդ կետերը:

3. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետին սույն որոշման օրինակները 3 աշխատանքային օրվա ընթացքում առաքել վարչական շրջանների ղեկավարներին, Հայաստանի Հանրապետության ՆԳՆ ոստիկանության Երևան քաղաքի վարչության բաժինների պետերին և դիմողներին:

4.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246

Հավելված
Երևանի քաղաքապետի
06.08.2025թ.
հ. 3145-Ա որոշման

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ.Հ.	Դիմողը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Անշարժ գույքի տեսակը	Տրամադրվող հասցեն	Հաստատված հայտի քաղվածքի ծածկագիրը	Փոստային դասիչը
1	2	3	4	5	6	7
1	Սեդա Հարությունյան /լիազորված անձ/ Մարգարիտ Խաչատրյան	Շիրակի փողոց, հ.21 շենք, հ.11ա	բնակարան	Անշարժ գույքի նվիրատվության 25.07.2025թ. հ.3186 պայմանագրով, Մարգարիտ Խաչատրյանին նվիրած՝ Շիրակի փողոցի հ.21 շենքի հ.11ա հասցեում գտնվող բնակարանին տրամադրել հասցե՝ Շիրակի փողոց, հ.21 շենք, բն.11/1	01113A5ULGV8	
2	Արտաշես Մկրտչյան /լիազորված անձ/ «ԱՐՏԿՈՄ» ՓԲԸ	Արցախի փողոց, հ.55	հողամաս	«ԱՐՏԿՈՄ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Արցախի փողոցի հ.55 հասցեում գտնվող հողամասի /վկ. հ.01112023-01-0351/ բաժանման հատակագծով առանձնացվող 21491.8քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Հ. Այվազովսկու փողոց, հ.2	01053CUQ38WD	
3	Վրեժ Գևորգյան /լիազորված անձ/ Արմեն Դավիթավյան /սեփականատեր/	Դավիթ Հովհաննեսի /Արաբկիր 19-րդ/ փողոց, հ.6 շենք, հ.81	բնակարան	Արմեն Դավիթավյանին սեփականության իրավունքով պատկանող, Դավիթ Հովհաննեսի /Արաբկիր 19-րդ/ փողոցի հ.6 շենքի հ.81 հասցեում գտնվող բնակարանի /վկ. հ.05062025-01-0223, ընդհ. բաժն. 5.1քմ/ բաժանման հատակագծով առանձնացվող 54.9քմ մակերեսով մասին տրամադրել հասցե՝ Դավիթ Հովհաննեսի փողոց, հ.6 շենք, բն.81/1	01033R8NXHHN	

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ԿԱՏԱՐՈՂ՝ ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

X

ԱՐՄԵՆ ՓԱՄԲՈՒԽՉՅԱՆ

Signed by: PAMBUKHCHYAN ARMEN 3611840246